

# Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի 2022 թ. գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2022 թ. գործունեության կարևորագույն արդյունքներից են՝  
«Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ-3» գիտական թեմայի /ղեկ. պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/ շրջանակներում՝  
ա. Ազատանի երկաթիդարյան ամրոց-բնակավայրում կատարվել է նախկինում պեղված հատվածների մաքրում և կոնսերվացում: Ձուգահեռ պեղվել են 2 դամբարաններ: Դրանցից I-ը հիմնահողային թաղում էր և գտնվում է Ազատանի II դամբարանադաշտին հարող հատվածում: Դամբարանը ծածկված էր 6-7 տոննա քաշ ունեցող սալաքարով: Խցի կենտրոնում՝ աջ կողքին կծկված պատկած կմախքի դիմաց դրված էին մեկական երկկանթանի անոթ, կճուճ, մեծ ափսե և քրեղան: Ոտքերի դիմաց հայտնաբերվեց երկաթյա դաշույն և երկաթյա նիզակ: Խցի արևելյան պատի տակ դրված էր մոտ 80սմ երկարությամբ բրոնզյա գոտի: I թաղումը և ուղեկցող նյութերը հեռացնելուց հետո, դրա տակ բացվեց ևս մեկ թաղում: Աջ կողքին կծկված պատկած կմախքի դիմաց դրված էր մեկ սափոր՝ շուրթին հենած երկաթյա դաշույնով: Դամբարանն ըստ հայտնաբերված նյութերի թվագրվում է Ք.Ա. IX-VIII դդ.: II դամբարանը հայտնաբերվեց բնակավայրի տարածքում: Արևելք-արևմուտք ուղղված քարարկղային խցի մեջ հայտնաբերվեցին դեմքով իրար նայող, կծկված 2 կմախքներ՝ կին և տղամարդ, 2 բրոնզյա, ներձկված ապարանջաններ և ուլունքներ: Ըստ հայտնաբերված նյութերի դամբարանը թվագրվում է Ք.Ա. V-IV դդ.:  
բ. 2019-2021 թթ. պեղված դամբանային համալիրների ընձեռած տեղեկությունների հիման վրա կատարվեց Լեռնակերտի Վերի Բերդի դամբանադաշտի հնահասարակության սոցիալ-ժողովրդագրական դրության հետազոտություն: Խնդիրը քննվեց դամբանադաշտերի կառուցվածքի, կառուցապատման սկզբունքների, հայտնաբերված նյութական մշակույթի նմուշների և աճյունների մարդաբանական հետազոտության հիման վրա: Ձուգահեռ Վերի Բերդի դամբանադաշտի կառուցվածքը հետազոտվեց ըստ օդալուսանկարների և հուշարձանի մոդելավորման: Մա հնարավորություն տվեց ուրվագծելու արտաքին կառուցվածքներով տարբերվող և ըստ այդմ՝ տարբեր ենթախմբերում տեղորոշվող դամբանները, դրանց առանձնացման սկզբունքները և այլ հարցեր:  
գ. Վիպական Հայկի կերպարից առանձնացվեց պատմական Հայկին վերաբերող մասը: Հայկ Նահապետի վիպական կերպարը քաջ հայտնի է Մովսես Խորենացու, Անանուն պատմիչի (Մեբեռու), մասամբ նաև հետագա մատենագիրների գրառումներից: Այդուհանդերձ, հայագետների հատուկ ուշադրությանը գրեթե չեն արժանացել հայախոս էթնոսի կյանքում այդ կերպարի նախատիպ պատմական (իրական) Հայկի իրականացրած բարեփոխումները: Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց հայոց պետականության, հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության, հայոց հնագույն միասնական պաշտամունքի ձևավորման գործում դրանց ունեցած դերի կարևորությունը:

## 2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2022թ.

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2022թ. շարունակել է իրականացնել «Շիրակի հնագիտական և պատմագագազրական ուսումնասիրություններ-3» գիտահետազոտական ծրագիրը /ղեկ.՝ պ.գ.թ. Արմեն Հայրապետյան/:

**Հնագիտության գծով**- 2022թ. շարունակվել են հայ-գերմանական համատեղ արշավախմբի աշխատանքները Ջրաձորի երկաթիդարյան ամրոց-բնակավայրի հայկական կողմում: Ընդարձակվել է 2020թ. դրված հետախուզական փոստրակը: Հայտնաբերված պատերի մնացորդները, սակայն ամբողջական կառույցի չեն վերածվել: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են քարից և ոսկորից աշխատանքային գործիքներ, բեկորային խեցեղեն, ինչպես նաև ազնիվ եղջերվի մեծ եղջյուր: Հայտնաբերված խեցեղենը թույլ է տալիս կառույցը թվագրել Ք.ա. VII դ.-ով: Այս և այլ փաստեր գալիս են ապացուցելու, որ ուրարտական ներխուժումից հետո ևս կյանքը բնակավայրում շարունակվել է:

**Պատմագիտության գծով** - 2022թ. հատուկ անունների ստուգաբանության միջոցով ապացուցվել է Ասորեստանյան սեպագիր արձանագրություններում հիշատակված Խուրուշ-կիա, Նաիրի և Արմիրալի երկրների տարածքում հնդեվրոպական-հայկական էթնիկ տարրի առկայությունը դեռևս սեպագրային դարաշրջանում: Շարունակվել է պատմական Տայք նահանգի պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը: Քննվել են նահանգի հայ ազգաբնակչության ուժացման ընթացքն ու դրան նպաստող գործոնները: «Հայկական երկաթուղիների» շինարարության պատմության համատեքստում առանձին քննության առարկա է դարձել երկաթուղային բանվորների սոցիալական վիճակը: Ներկայացվել են այն պատճառները (իրավագուրկ վիճակ, ցածր վարձատրություն, արտադրական տրավմատիզմ, սոցիալական երաշխիքների և անվտանգության կանոնների բացակայություն), որոնք նպաստավոր պայմաններ ստեղծեցին XIXդ. վերջից երկրամասում սոցիալական շարժումների ակտիվացման համար: Բացահայտվել է 1918 և 1920 թթ. թուրք-հայկական պատերազմների ընթացքում թուրքական դիվանագիտության կողմից գործարկված «խաղաղության օրակարգով պատերազմելու», «խաղաղություն պարտադրելու» կամ այսպես կոչված «սողացող նվաճման» ռազմավարության էությունը: Հիմնավորել է թուրքական «խաղաղասիրությունից» պաշտպանվելու անհրաժեշտությունը: Շարունակվել է Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. երկրորդ կեսին և XXդ. սկզբի կրթամշակութային կյանքի ուսումնասիրությունը: Գիտական հանրության դատին է հանձնվել ալեքսանդրապոլցի մտավորական Կարապետ Հովհաննջանյանցի «Թոփալ-Թաթոս» կատակերգությունը:

**Ազգագրության գծով** –2022թ. խնդիր է դրվել հետազոտել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ու տնտեսավարման նոր՝ պետական եղանակին անցնելիս Ալեքսանդրապոլի ավանդական տնտեսության մեջ առաջացած փոփոխությունները: Նախկինում զարգացած արհեստավորական ավանդույթներ ունեցող քաղաքում սկսվեցին լուրջ տեղաշարժեր, որոնց արդյունքում որոշակիորեն փոխվեցին ոչ միայն բնակչության հիմնական զբաղմունքները, այլև տնտեսական, հասարակական հարաբերություններն ու դրանով պայմանավորված նաև կենցաղավարման ձևերը: Մակայն, 1918 և 1920 թթ. թուրքական արշավանքներից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում նման խորքային վերափոխումներն ընթացան դանդաղ: Շարունակվել է 2020թ. 44-օրյա պատերազմի հետտրավմատիկ, սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների, պատերազմում հաշմանդամ դարձած, գերի ընկած, անհետ կորած, սպանված զինձառայողների ընտանիքների ստրեսա-

յին իրավիճակների և դրա հաղթահարման ուղիների ուսումնասիրությունը՝ պարզելու համար պատերազմի հնարավոր հետևանքները հայ ժողովրդի հետագա բարոյահոգեբանական և էթնոմշակութային նկարագրի վրա: Կատարվել է Գյումրու երգային ու բանաձևային բանահյուսության համակարգման ու տարբերակայնության քննություն: Քննվել են Շիրակի արդի երգիծական բանահյուսության ու նրա պոետիկայի առանձնահատկությունները:

**Բանագիտության գծով** - 2022թ. քննվել են Գյումրու արդի խոսվածքի ձևաբանական իրողությունները պատմական զարգացման մեջ: Ուսումնասիրության կիզակետում է եղել նաև մանկական բանահյուսական նյութերի ու հարսանեկան երգատեքստերի տեքստաբանական քննությունը: Վերլուծվել են մանկաշխարհին առնչվող գեղարվեստական պատկերները բանահյուսական ու հեղինակային միջավայրերում: Միաժամանակ կատարվել է Շիրակի և Մոկսի քնարական բանահյուսության տեքստերի՝ մասնավորապես հարսանեկան երգերի համեմատական վերլուծություն:

**Արվեստագիտության գծով** – 2022 թ. շարունակվել է Շիրակի տարածաշրջանին վերաբերող ողբերգի ժանրի տիպաբանական և ոճական առանձնահատկությունների հետազոտությունը: Քննության են առնվել ողբերգերի ժանրային առանձնահատկություններն ու հորինվածքային այն բաղադրիչները, որոնք ժամանակի ընթացքում պահպանել են կենսական կայունություն: Ճարտարապետական շերտագրական քննության հիման վրա պարզաբանվել են Անիի շրջանի Կարմիր վանքի Մ. Աստվածածին եկեղեցու կառուցման և վերակառուցման ժամանակահատվածները: Հաստատվել են Անի-Շիրակի և հայ ճարտարապետական մյուս դպրոցների և նրանց ազդեցության գոտիներում գտնվող շրջանների տարածաչափական ընդհանուր մտածողության երևույթները:

2022-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում հրատարակվել են «Գիտական աշխատություններ» պարբերականի 25-րդ հատորի 1-ին (236 էջ) և 2-րդ (244 էջ) պրակները, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն (312 էջ), 76 գիտական հոդվածներ (18-ը՝ արտերկրում) և գիտաժողովների 89 զեկուցումներ (18-ը՝ արտերկրում): Իրականացվել են «Չարենցը և Գյումրին» խորագրով միջազգային գիտաժողովը (9 մասնակից, 1-ը՝ արտերկրից), «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային գիտաժողովը (139 մասնակից, 15-ը՝ արտերկրից), «Ափինյանական ընթերցումներ. ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովը (24 մասնակից, 2-ը՝ արտերկրից), «Եզանյանական ընթերցումներ» հնագիտական 2-րդ հանրապետական գիտաժողովը (21 մասնակից), «Ազգագրական ընթերցումներ» հանրապետական 2-րդ գիտաժողովը (12 մասնակից), «Մահմանադրականության ուղին. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով գիտաժողովը (7 մասնակից), 4 հնավայրերի պեղումներ, 38 ազգագրական գիտարշավներ և 14 գիտական սեմինարներ: ՇՀՀ կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ հաշվետու տարում գործել են ֆեյսբուքյան էջը և համացանցում տեղադրված երկլեզվյա կայք-էջը /[www.shirak-center.sci.am/](http://www.shirak-center.sci.am/):

ՇՀՀ կենտրոնի տնօրեն

Ա. Հայրապետյան

գիտքարտուղար

Ա. Ակոպով

### 3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները 2022թ.

Հաշվետու տարում ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական թեմաների մրցույթի արդյունքներով կենտրոնում իրականացվում են երկու թեմաներ՝ ա. «Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)» և բ. «Հայ աշուղական արվեստը պատմաքննական լույսի տակ»:

«Շիրակի մանկական բանահյուսությունը» խորագրով ևս մեկ թեմա էլ իրականացվում է 2022թ. հոկտեմբերից «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» ծրագրի շրջանակներում:

ա. «Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)» (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Ակոպով) թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի կատարման հաշվետու տարում իրականացվել են նախկինում արված չափագրությունների համադրություններ և տիպաբանական վերլուծություններ, ինչպես նաև խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ մամուլում և գիտական գրականության մեջ առկա Տայքին վերաբերող հրապարակումների վերլուծություն: 2022 թ. հուլիսի 26-30-ին թեմայի ղեկավար Ա. Ակոպովի, թեմայի կատարող Դ. Նահատակյանի և թուրքագետ Ս. Հակոբյանի մասնակցությամբ արշավախումբը եղել է Թուրքիայի հանրապետությունում, որտեղ՝ պատմական Տայքի ճակք, Ագորդացիոր և մասամբ Արսեացիոր գավառների տարածքում կատարվել են դաշտային հետազոտական աշխատանքներ: Ճշգրտվել է նշված գավառների գրեթե բոլոր բնակավայրերի և հուշարձանների տեղագրությունը, հայտնաբերվել են հուշարձաններ, որոնք առ այսօր հայագիտության մեջ անհայտ էին, կատարվել են այդ հուշարձանների լուսանկարահանում և չափագրություններ: Կատարված աշխատանքների արդյունքները կամփոփվեն հաջորդ տարում հրատարակվելիք Տայքի Ագորդացիոր և ճակք գավառների հուշարձանների եռալեզու կատալոգի մեջ: 2022 թ. թեմայի ղեկավարն ու կատարողները թվով 4 զեկուցումներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում՝ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողով (23-24.09.2022), ինչպես նաև ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում «Ճարտարապետություն և արվեստ. տեսությունից պրակտիկա» միջազգային գիտաժողով (23-25.11.2022):

Հաշվետու տարում թեմայի շրջանակներում հրատարակվել է 4 գիտական հոդված:

բ. «Հայ աշուղական արվեստը պատմաքննական լույսի տակ» (ղեկ.՝ արվեստագիտ.թ. Հ. Հարությունյան) թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հավաքված նյութի պատմաքննական վերլուծությունը հավաստում է, որ հայ աշուղական կենտրոնները կամ համքարությունները ստեղծվել ու գործել են պատմամշակութային այնպիսի միջավայրում, որտեղ պահանջված է եղել ժողովրդապրոֆեսիոնալ բանաստեղծ-երաժշտի արվեստն ու ստեղծագործությունը: Ալեքսանդրապոլի աշուղական կենտրոնը, որը ձևավորվել էր Արևմտյան Հայաստանի նշանավոր քաղաքներում՝ Վանում, Կարինում, Բայազետում և Կարսում գործող աշուղական համքարությունների ավանդույթների վրա, բարձրացավ մի նոր մակարդակի՝ աշուղ Ջիվանու ջանքերի շնորհիվ: Ալեքսանդրապոլի աշուղական համքարությունը ի վերջո վերաճեց յուրահատուկ դպրոցի՝ քաղաքում ստեղծված հասարակական-քաղաքական նոր՝ ազգային ազատագրական գաղափարախոսության անմիջական ազդեցությամբ: Ամփոփվել են նաև վրացի և ադրբեջանցի աշուղա-

գետների հիմնադրույթները, որտեղ բացահայտվել են ոչ միայն տեղային և համընդհանուր մշակութային երևույթներ, այլև իրարամերժ ու թյուր ձևակերպումներ՝ առհասարակ աշուղական ավանդույթների, զարգացման օրինաչափությունների, երգերի ժանրային բնորոշիչների և այլ երևույթների պատմական և տեսական խնդիրների վերաբերյալ: Դրանց համակողմանի քննության արդյունքները կարևոր դեր են կատարելու արդի հայ աշուղագիտության պատմաքննական խնդիրների լուսաբանման, աշուղական բազմադարյա արվեստի իրական նկարագրի ու ժառանգության հանրահռչակման համար:

Կատարված աշխատանքի արդյունքները ամփոփվել են 8 գիտական հոդվածներում:

**գ. «Շիրակի մանկական բանահյուսությունը»** (ղեկ. բան. գիտ. թեկն. Հ. Մատիկյան) թեմայի իրականացման առաջին եռամսյակում կատարվել է արխիվային նյութերի ուսումնասիրություն (ԳԱԹ-ի, ՀՀ ԳԱԱ Հանգիտության և ազգագրության ինստիտուտի և Մատենադարանի արխիվների բանահյուսական ֆոնդերում), թեմային առնչվող նյութի մուտքագրում և համադրություն: Միջազգային գիտաժողովների շրջանակներում ընթերցվել են թեմայի վերաբերյալ երեք զեկուցումներ, մեկ հոդված ներկայացվել է տպագրության:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն

Ա. Հայրապետյան

գիտքարտուղար

Ա. Ակոպով

4. –

#### 5. 2022 թ. հրապարակումների ցանկ

##### Մենագրություններ, ժողովածուներ

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2022, հ.25, պրակ 1, 236 էջ:
2. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, Գյումրի, 2021, հ.25, պրակ 2, 244 էջ:
3. «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի (Գյումրի, 23-25 սեպտեմբերի) նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2022, Երևան, «Գիտություն», 312 էջ:

##### Հոդվածներ, զեկուցումներ

1. Ավագյան Ի.Է., Պատվո բլուրը որպես մշակութային պահպանական միավոր և այնտեղ հանգչող հերոսները, Գյումրի, «ՀՀ ԿԳՄՄՆ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, «Կրթության և գիտության հիմնախնդիրներ», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու», «ՇՊՀ», 2022, թիվ 1, պրակ Բ, էջ 52-63:
2. Ավագյան Ի.Է., Գյումրու Ալեքսանդրապոլի բերդի Ս. Ալեքսանդրայի եկեղեցու պատի տակ և մերձակայքում հանգչող հերոսները որպես հայ, ռուս և վրաց ժողովրդների բարեկամության խորհրդանիշ, Երևան, «Հյուսիսային համալսարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու», «Հյուսիսային համալսարան» հրատ., 2022, էջ 176-184:
3. Բազեյան Կ.Ռ., Արցախի ասեղնագործական դպրոցի շուրջ, Ստեփանակերտ, «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», հ. 10, 2022, էջ 129-136:
4. Բոյաջյան Ա.Գ., Մահտեսյան Հ.Շ., Հարավային Կովկասի վարչատարածքային բաժանումները և բնակչության էթնոկրոնական կազմի շարժընթացը XIX դ. երկրորդ կեսին, XX դ. սկզբին , Գյումրի, Մ. «Շիրակի պետական համալսարանի Գիտական տեղեկագիր», N 1, Պրակ Բ, 2002, էջ 39-52:
5. Գրքիկյան Լ.Հ., Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ստորոգառությունը, Վանաձոր, «Վանաձորի պետական համալսարանի Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտություններ», հ. 1, 2022, էջ 17-29:
6. Ալեքսանյան Կ.Վ., Խաղաղության օրակարգով պատերազմելու թուրքական ռազմավարությունը 1918-1921թթ., Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի Գիտական տեղեկագիր», Պրակ 2, 2022, էջ 95-108:
7. Հարությունյան Հ.Հ., Շիրակի երաժշտական բանահյուսության արդի դրսևորումները, Երևան, «Կոմիտասի թանգարան-ինստիտուտի Տարեգիրք», հատոր Է, 2022, էջ 14-24:
8. Պետրոսեան Ս.Գ., Հնագոյն Բզունիքի արտօնեալ դասերի եւ պաշտամունքի մասին, Պէյրութ, «Հայկազեան հայագիտական հանդէս», N42/1 (ԽԲ/1), 2022, էջ 433-463:
9. Պետրոսյան Ս.Գ., Վիպական Հայկը, պատմական Հայկը և նրա ժառանգությունը, Երևան, «Վէմ համահայկական հանդէս», թիվ 1 (77) հունվար-մարտ, 2022, էջ 21-52:

10. Սահակյան Շ.Ա., Շիրակի արդի բնահյուսությունը, ծիսատոնական կենցաղը և հոգեբանությունը, «Նշխարներ Շիրակի բնավոր մշակույթից» ուղեցույց, Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2022, էջ 18-31:
11. Авагян И.Э., Оганнисян Г.А., Формирование городской телефонной сети в городе Александрополе в начале XX в. по источникам Национального архива Республики Армения, «Наука в современном мире: взгляд молодых ученых», Материалы VIII Международной научно–практической конференции молодых ученых, аспирантов и студентов (Грозный, 27–28 мая 2022 г.). Материалы Круглого стола «Аксиологический кризис человеческого бытия: гуманизм–трансгуманизм–посттрансгуманизм», Грозный, ЧГПУ, ЧГУ, АЛЕФ, 2022, 10-16:
12. Айвазян Г.С. Визит наместника Кавказа М. Николаевича в Александрополь в 1875 году. М., «Интернаука»: научный журнал, № 44 (267), Изд. «Интернаука», 2022, с. 23-27.
13. Айвазян Г.С. Общественный клуб города Александрополь. XXXIX International Multidisciplinary Conference “Recent Scientific Investigation”. Shawnee, USA, Proceedings of the Conference (December, 2022). Primedia E-launch LLC,. 2022, с. 61-67.
14. Акопов А.А., Пенякская операция российской армии 1855 года, Ставрополь, «Этнополитические конфликты на Кавказе и Ближнем Востоке и механизмы их урегулирования: история и современность», Материалы международной научно-практической конференции, 2022, с. 113-118.
15. Асатрян А.О., Жизнь и композиторская деятельность Ал. Спендиарова начала XX-ого века (по материалам Г. Тигранова), Budapest, «The scientific heritage», VOL 2, No 87 (87), 2022, pp. 3-6.
16. Базеян К.Р., Некоторые аспекты развития армянского народного искусства, Минск, «Сохранение нематериального историко-культурного наследия стран СНГ в контексте глобальных вызовов», Международный научно-практический семинар Сборник научных статей, БГУКИ, 2022, с. 88-94.
17. Оганнисян А.Л., О процессе создания историко-культурного заповедника-музея «Кумайри», актуальных проблемах и возможностях развития, Молодежный вестник СПбГИК, № 1 (17), 2022, с. 116-120.
18. Хачатрян Д.К., О некоторых проблемах фортепианного исполнительского искусства, М., сборник статей по материалам LXVI Международной научно-практической конференции «Культурология, искусствоведение и филология: современные взгляды и научные исследования», Изд. «Интернаука», № 11(59), 2022, с. 5-11.
19. Худавердян А.Ю., Енгибарян А.А., Матевосян Р.Ш., Варданян Ш.А., Хачатрян А.А., Петросян Л.А., Население эпохи поздней бронзы и раннего железного века из областей Ширака и Гегаркуника (Армения), по данным палеопотологии, Ерևան, «Հայաստանի բժշկագիտություն», հ. LXII, 3, 2022, էջ 136-149:
20. Акоров А., Наурапетян А., The issue of Tayk’s ethnic identity and the spreading of Orthodoxy In Tayk, Praha, Czech Republic, «Sciences of Europe», No 106, 2022, pp. 39-42.

21. Asatryan A., "General piano" subject teaching peculiarities in music higher education institutions, Rotterdam, XX International Multidisciplinary Conference "Innovations and Tendencies of State-of-Art Science". Proceedings of the Conference (June, 2022), 2022, pp. 27-34.
22. Bazeyan K., Aghanyan G., "The Greek Population of the Province of Alexandropol during the Turkish Invasions of 1918-1920: An Analysis based on Oral History", Athens, «Athens Journal of History», Volume 8, Issue 4, October, 2022, pp. 321-332.
23. Bazeyan K., Aghanyan G., "The dynamic of Alexandropol-Leninakan-Gyumri intra-territorial changes (historical-cultural perspective)", Yerevan, "Review of Armenian studies", N 3 (30), 2022, 3, էջ 133-148:
24. François Fichet de Clairfontaine and Stéphane Deschamps in collaboration with Felix Ter-Martirossov, Vincenzo Mutarelli, Anna Azyzyan, Armine Gabrielyan, Varduhi Melikyan, **Hamazasp Khachatryan** and **Larisa Yeganyan** ; Achaemenid ceramics from the site Beniamin II (Shirak, Armenia): the end of the 6th to the mid 4th centuries BC, Yerevan-Oxvord, «Aramazd, Armenian journal of near eastern studies», volum XV (1-2), 2022, pp. 203-250:
25. **Khachatryan H., Yeganyan L.,** Petrosyan L., Newly discovered Early and Middle Bronze Age tombs in Shirak, Yerevan-Oxvord, «Aramazd, Armenian journal of near eastern studies», volum XV (1-2), 2022, pp. 25-42.
26. Harutyunyan H., "The Art of Ashugh in the musical Life of Alexandropol". Praha, «Sciences of Europe», No 93, 2022, pp. 9-12.
27. Harutyunyan H., "About Armenian folk lamentation songs". Praha, «Sciences of Europe», No 97, 2022, pp. 6-11
28. Harutyunyan H., "Patriotic Songs of Ashugh Jivani". Praha, «Sciences of Europe», No 102, 2022, pp. 15-22.
29. Matikyan H., "The Purview Of Equivalence In The Context Of Children's Literature Translation, Concordia Discors vs. Discordia Concors, Sucava (Romania)", «International Journal for Researches into Comparative Literature, Contrastive Linguistics, Cross-Cultural and Translation Strategies», no. 17-18, 2022, pp. 23-28.
30. Vardanyan B., Mkrtychyan L., "Modelling of Bronze and Iron Age Monuments at the Northwestern Slopes of Mount Aragats based on a Case Study of Lernakert, Systemizing the Past, Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, London, Archaeopress, 2022, pp. 446-453.

**Հողվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հողվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2022, հ. 25, պրակ 1, 236 էջ:**

1. Ալեքսանյան Կ.Վ., Աբրեյան Հ, Տեղական իշխանության մարմինների գործունեությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-դեկտեմբերին, էջ 89-99:
2. Ակոպով Ա.Ա., Նահատակյան Դ.Ս., Ագորդացիոր գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության ու արդի վիճակի շուրջ, էջ 52-60:
3. Այվազյան Գ.Ս., Ալեքսանդրապոլի դպրոցների պատմությունն աշակերտների հիշողություններում, էջ 61-73:
4. Բազեյան Կ.Ռ., Աղանյան Գ.Թ., Շիրակի պանրագործական մշակույթը, էջ 5-15:



5. Գրքիկյան Լ.Հ., Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ենթակատարությունը, էջ 143-152:
6. Հայրապետյան Ա.Ս., Դրվագներ անդրկովկասյան երկաթուղու շինարարության պատմությունից, էջ 74-81:
7. Հայրապետյան Ս.Ա., Վարդանյան Ա.Ա., Բայական հիմքով վերջածանցավոր բաղադրությունները գրաբարում, էջ 133-142:
8. Հարությունյան Հ.Հ., Ողբերգի ժանրային մի քանի առանձնահատկությունների շուրջ, էջ 184-189:
9. Հովհաննիսյան Ռ.Պ., Ջաննի Ռոդարիի հեքիաթագրության առանձնահատկությունները, էջ 160-168:
10. Մատիկյան Հ.Հ., Գ. Սրվանձոյանցի՝ մանկաշխարհին առնչվող գրառումները (բանահյուսական այլ նյութերի համադրությամբ), էջ 107-112:
11. Նահատակյան Դ.Ս., Ակոպով Ա.Ա., Գրիգորյան Ա.Ա., Եղեգնամոր (Չանգլի) եկեղեցին IX-XIդդ. Տայք-Գուգարքի միջնադարյան հայկական ճարտարապետական դպրոցի համատեքստում, էջ 208-216:
12. Պետրոսյան Ս.Գ., Ուրարտական թագավորության կազմավորման մասին, էջ 33-41:
13. Սահակյան Կ.Ա., Բանաձևային կայուն դարձվածքների ազդեցությունը անձի ինքնապաշտպանական մեխանիզմների հզորացման գործընթացում, էջ 153-161:

**Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, Գյումրի, 2022, հ. 25, պրակ 2, 244 էջ:**

1. Ասատրյան Ա.Հ., Գեորգի Տիգրանովը «Նամուս» օպերայի մասին, էջ 201-209:
2. Ավագյան Ի.Է., «Կումայրի» արգելոց-թանգարանի ֆոնդերում պահպանվող Շիրակավանից գտնված պատահական գտածոների շուրջ, էջ 91-99:
3. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի շարժընթացը (XXդ. վերջ XXIդ. սկիզբ), էջ 184-193:
4. Հայրապետյան Ա.Ս., Ալեքսանդրապոլ-Կարս երկաթգծի շինարարության բանվորների սոցիալական վիճակը, էջ 164-174:
5. Հայրապետյան Ս.Ա., Գիտական լրատու, էջ 228-236:
6. Հարությունյան Հ.Հ., Ողբերգի ժանրը Շիրակի արդի երաժշտական բանահյուսության մեջ, էջ 210-220:
7. Հովհաննիսյան Ռ. Պ., Շիրակի արդի երգիծական բանահյուսությունը, էջ 51-58:
8. Մատիկյան Հ.Հ., Մտափոխությունը՝ որպես հղիության ցուցիչ (բանահյուսական նյութերի համատեքստում), էջ 59-66:
9. Պետրոսյան Լ.Ս., Երվանդ Վերջինի տոհմաբանության շուրջ, էջ 155-163:
10. Պետրոսյան Ս.Գ., Խուբուշկիա և Արմիրալի երկրների նույնության ու բնույթի մասին, էջ 145-154:

**Հոդվածները հրատարակվել են «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Երևան, 2022, 312 էջ:**

1. Ալեքսանյան Կ.Վ., Խաղաղության օրակարգով պատերազմելու թուրքական ռազմավարությունը 1918-1921թթ., էջ 120-122:
2. Ակոպով Ա.Ա., Տայքի հայ բնակչությունը համաձայն XVI դարի օսմանյան հարկացուցակների, էջ 70-73:
3. Ակոպով Ա.Ա., Նահատակյան Դ.Ս., Հայրապետյան Ա.Ս., Ճակք գավառի հուշարձանների տեղագրության և արդի վիճակի շուրջ, էջ 213-216:
4. Այվազյան Գ.Ս., Ալեքսանդրապոլի տարրական դպրոցների նկարագրությունը «Թոփալ-Թաթոս» կատակերգությունում, էջ 126-128:
5. Ասատրյան Ա.Հ., Գեորգի Տիգրանովը «Նամուս» օպերայի մասին, էջ 227-230:
6. Ավազյան Ի.Է., Հովհաննիսյան Հ.Ա., Ալեքսանդրապոլի կապի հանգույցը ըստ Հայաստանի ազգային արխիվի աղբյուրների, էջ 100-103:
7. Բազեյան Կ.Ռ., Ալեքսանդրապոլ-Լենինականի տնտեսությունը 1920-1930-ական թթ, էջ 152-153:
8. Գրիգորյան Ա.Ա., Պատմական Տայք նահանգի հայտնի հուշակոթողների ուսումնասիրություն, էջ 209-210:
9. Խաչատրյան Հ.Հ., Նոր մոտեցում Վահագնի առասպելի իմաստաբանությանը, էջ 269-272:
10. Նահատակյան Դ.Ս., Ակոպով Ա.Ա., Գրիգորյան Ա.Ա., Ասփակի վանական համալիրի ճարտարապետական ուսումնասիրությունները, էջ 210-212:
11. Մելիք-Ադամյան Հ.Հ., Խաչատրյան Հ.Հ., Իռլանդացի ճանապարհորդ Հենրի Լինչի ուսումնասիրությունները Շիրակի պատմական շրջանում, էջ 75-77:
12. Հայրապետյան Ա.Ս., Ալեքսանդրապոլ-Կարս երկաթգծի շինարարության բանվորների սոցիալական վիճակը, էջ 94-97:
13. Հարությունյան Հ.Հ., Օրորի ժանրը Շիրակի արդի երաժշտական բանահյուսության մեջ, էջ 232-235:
14. Հովհաննիսյան Ա.Լ., Համառոտ ամփոփագիր Գյումրու թանգարանների ստեղծման ընթացքից, էջ 198-200:
15. Հովհաննիսյան Ռ.Պ., «Տղա Դավթի և աղջիկ Խանդութի հեքիաթի» լեզվաոճական քննությունը, էջ 242-245:
16. Մատիկյան Հ.Հ., Մաքդաուել Ռոբերտ, Լեռների բանահյուսություն. միջգիտակարգային ուսումնասիրություն, էջ 200-204:
17. Մատիկյան Հ.Հ., Շիրակի քնարական բանահյուսության լեզվաբանագիտական քննություն, էջ 186-189:
18. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի և Լոռու մարզերի բնակչության բնական վերարտադրության հիմնական ցուցանիշների վերլուծությունը, էջ 172-174:
19. Պետրոսյան Լ.Ս., Երվանդ Վերջինի տոհմաբանության շուրջ, էջ 60-62:
20. Պետրոսյան Ս. Գ., Խուրուշկիա և Արմիրալի երկրների նույնության ու բնույթի մասին, էջ 57-60:
21. Սահակյան Կ. Ա., Հայրենիքի ֆենոմենը Արցախյան 44-օրյա պատերազմի համատեքստում (Էթնոհոգեբանական ուսումնասիրություններ), էջ 204-206:
22. Վարդանյան Բ.Վ., Լեռնակերտի դամբանադաշտի թաղման կառույցների ձևափոխությունները բրոնզի և երկաթի դարերում (մ.թ.ա. 16-10-րդ դարեր), էջ 23-25:

23. Վարդանյան Բ.Վ., Մկրտչյան Լ.Ա., Ղազարյան Ն.Ա., Ջարիկյան Ն.Հ., Ղազարյան Գ.Մ.,  
Հախվերդյան Ա.Ս., Շահմուրադյան Մ.Ս., Թլիկ 4 Բնակավայրի պեղումների նախնական  
արդյունքները (2021 թ.), էջ 25-28:

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

գլխավոր տնօրեն՝

Ա. ԱԿՈՊՈՎ

**6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն**

Տնօրեն՝ պ. գ. թ., դոցենտ Ա. Ս. Հայրապետյան,  
Գիտքարտուղար՝ պ. գ. թ. Ա. Ա. Ակոպով,  
Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru,  
Կայքէջ՝ www.shirakcenter.sci.am

7. —

8. —

**9. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին**

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 25-ամյակի կապակցությամբ Ս. Հայրապետյանը, Հ. Խաչատրյանը, Ս. Պետրոսյանը և Ա. Հայրապետյանը պարգևատրվել են ՀՀ ԳԱԱ նախագահի «**Գովեստագրերով**», Ա. Ակոպովը, Լ. Կոստանյանը, Կ. Բազեյանը, Ռ. Հովհաննիսյանը և Հ. Մատիկյանը ՀՀ Շիրակի մարզպետի «**Շնորհակալագրերով**», Ա. Հայրապետյանը՝ «**Պատվոգրով**», Ա. Բոյաջյանը, Գ. Այվազյանը, Ի. Ավագյանը, Հ. Հարությունյանը, Բ. Վարդանյանը, Ա. Մառաջյանը, Կ. Ալեքսանյանը, Լ. Պետրոսյանը և Ե. Վարոսյանը՝ ՀՀ Գյումրու համայնքապետի «**Շնորհակալագրերով**»:

**10. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ՝ նշելով համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները**

ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՃՇԱՀ-ի, ՎՊՀ-ի, ՇՊՀ-ի, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի, ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի, Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի և ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի հայագիտական ամբիոնների, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հին ձեռագրերի ինստիտուտի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Կոմայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի, Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտի, Հայոց ազգագրության, Հայաստանի պատմության ազգային, Գյումրու երկրագիտական և ժող. ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, ԳԱԹ-ի և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ:

Համատեղողների թիվը՝ 5 (ՇՊՀ), 3 (ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ), 2 (ՇԵԹ), 1 (ՀԱԻ), 2 (Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղ), 3 (ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ):  
2022թ. եղել են 5 համատեղ հրապարակումներ. ԳԱԱ ՀԱԻ (2), ՇՊՀ (1), ՃՇԱՀ (2):

ՇՀՀ կենտրոնի տնօրենի՝  
գիտքարտուղար՝

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Ա. ԱԿՈՊՈՎ

Աղյուսակ 1

2022թ. Թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային ֆինանսավորում	Թեմատիկ ֆինանսավորում	Տնտ. Պայմանագրեր
1.	2.	3.	4.	5.	6.
1.	«ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ		43748.9	13372.0	

Աղյուսակ 2

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	«Եզանյանական ընթերցումներ» հնագիտական 2-րդ հանրապետական գիտաժողով	Գյումրի, 03 հունիսի 2022թ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	21	
2.	«Սահմանադրականության ուղին. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով գիտաժողով	Գյումրի, 05 հուլիսի 2022թ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ՀՀ Շիրակի մարզպետարան, Շիրակի պետական համալսարան	7	
3.	«Ազգագրական ընթերցումներ» հանրապետական 2-րդ գիտաժողով	Գյումրի, 05 օգոստոսի 2022թ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	12	
4.	«Չարենցը և Գյումրին» միջազգային գիտաժողով	Գյումրի, 09 սեպտեմբերի 2022թ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Շիրակի մարզային գրադարան	9	1
5.	«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային գիտաժողով	Գյումրի, 23-24 սեպտեմբերի 2022թ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	139	15
6.	«Ափիսյանական ընթերցումներ. ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով	Գյումրի, 12-13 նոյեմբերի 2022թ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	24	2

Աղյուսակ 4

Աշխատակիցների արտասահման (այդ թվում՝ ԱՊՀ երկրներ) կատարած գործուղումներ

N	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների քանակը		
			Գիտաժողովների մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
1	«Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	Թուրքիայի հանրապետություն Ուրբեկստան Բելոռուս	1 1	2 1 1	

**Աղյուսակ 5**

**Կազմակերպությունում արտասահմանյան գիտնականների ընդունելությունը**

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովների մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և քննարկումների համար
1	2	3	4	5	6
